

## Ձորանուտ համայնք

Իրավական և մասնագիտական հսկողության հարցաշար  
Պաշտպանության բնագավառում

1. Գործառույթը՝ մասնակցում է զինվորական հաշվառման գործընթացին, զորակոչի, զորահավաքի և վարժական հավաքների կազմակերպմանը, ստեղծում է զորահավաքային մարմին, աջակցում է քաղաքացիական պաշտպանության մարմինների գործունեությանը, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավմանը, զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծմանը, բնակչության, հատկապես երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակությանը, հանրակրթական դպրոցներում, նախնական մասնագիտական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում նախազորակոչային պատրաստության իրականացմանը:

2. Գործառույթի իրականացման օրենսդրական հիմքը՝ «Տեղական ինքնակառավարման մասին» /այսուհետ՝ ՏԻՄ/ ՀՀ օրենքի 36-րդ հոդված, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդված, «Հինապարտության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդված, «Ձորահավաքային նախապատրաստության և զորահավաքի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդված, «Պաշտպանության նպատակով տրանսպորտային միջոցների օգտագործման մասին» ՀՀ օրենքի 3-րդ և 7-րդ հոդվածներ, ՀՀ կառավարության 2002 թվականի մայիսի 20-ի թիվ 591 որոշում, ՀՀ կառավարության 2005 թվականի հունիսի 9-ի թիվ 947-Ն որոշում, ՀՀ կառավարության 2010 թվականի մայիսի 27-ի թիվ 657-Ն որոշում:

Դրույթների անվանումը	Պահպանված է	Թերի է պահպանված	Պահպանված չէ	Հայտնաբերված խախտումները	Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ	Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները
1. Համայնքի զինապարտների գրանցամատյանների առկայություն:	V					
2. Համայնքի զինապարտների գրանցամատյանները՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով վարման վերաբերյալ փաստերի առկայություն:			V	Չի պահպանվել ՀՀ կառավարության 2010թ. մայիսի 27-ի «Ձինվորական հաշվառման կարգը հաստատելու և 1997թ. հուլիսի 17-ի 282 որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 657-Ն որոշման 14-րդ կետի 1-ից 8-րդ ենթակետերի պահանջը՝ համաձայն որի պետք է լրացվեր զինակոչիկների և զինապարտ քաղաքացիների անձնական տվյալների վերաբերյալ տեղեկատվություն:	Առաջարկվում է համաձայն ՀՀ կառավարության 27.05.2010թ. N 657-Ն որոշման տարածքային զինկոմիսարիատի 4-րդ բաժնի հետ իրականացնել համատեղ աշխատանքներ:	Երկամսյա ժամկետում

Դրույթների անվանումը	Պահպանված է	Թերի է պահպանված	Պահպանված չէ	Հայտնաբերված խախտումները	Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ	Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները
3. ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում զինապարտների վերաբերյալ ցուցակների տարածքային զինվորական կոմիսարիատ ներկայացման ապահովում:		V		Թերի է պահպանվել 1998թ. սեպտեմբերի 16-ի «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին կետի ատենթակետի պահանջը՝ համաձայն որի պետք է ժամանակին և սահմանված ձևով վարել զինապարտների գրանցամատյանը, զինվորական հաշվառման ենթակա անձանց ցուցակները ներկայացնել նրանց հաշվառման զինվորական կոմիսարիատներ, ինչպես նաև տրամադրել հաշվառումից հանվելու, աշխատանքի ընդունվելու, տեղափոխվելու, ազատվելու վերաբերյալ տվյալները:	Առաջարկվում է համաձայն «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 27.05.2010թ. N 657-Ն որոշման տարածքային զինկոմիսարիատի 4-րդ բաժնի հետ իրականացնել համատեղ աշխատանքներ:	երկամսյա ժամկետում
4. Զինապարտների կողմից համայնքի բնակության վայրի հաշվառումից հանվելու, համայնքի աշխատակազմում աշխատանքի ընդունվելու և աշխատանքից ազատվելու վերաբերյալ տվյալների՝ տարածքային զինվորական կոմիսարիատ ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում ներկայացման ապահովում:	V					
5. Օրենքով սահմանված դեպքերում և կարգով զորակոչի, զորահավաքի ու վարժական հավաքների		V		Թերի է պահպանվել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի պահանջը՝ համաձայն	Առաջարկվում է համաձայն «ՏԻՄ» ՀՀ օրենքի մասնակցել զորակոչի, զորահավաքի ու վարժական հավաքների	պարբերաբար

Դրույթների անվանումը	Պահպանված է	Թերի է պահպանված	Պահպանված չէ	Հայտնաբերված խախտումները	Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ	Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները
կազմակերպման աշխատանքներին մասնակցության ապահովում:				որի համայնքի ղեկավարը օրենքով սահմանված դեպքերում և կարգով մասնակցում է զորակոչի, զորահավաքի ու վարժական հավաքների կազմակերպմանը:	կազմակերպման աշխատանքներին:	
6. Իրենց պարտականությունները խախտած զինապարտ քաղաքացիների վերաբերյալ տեղեկություններ ունենալու դեպքում զինկոմիսարիատին այդ մասին անհապաղ գրավոր տեղեկատվության տրամադրման վերաբերյալ փաստաթղթերի առկայություն:		V		Թերի է պահպանվել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի պահանջը՝ համաձայն որի համայնքի ղեկավարը իրենց պարտականությունները խախտած զինապարտ քաղաքացիների վերաբերյալ տեղեկություններ ունենալու դեպքում այդ մասին անհապաղ գրավոր տեղեկատվություն է տրամադրում տարածքային զինվորական կոմիսարիատին:	Առաջարկվում է համաձայն «ՏԻՄ» ՀՀ օրենքի իրենց պարտականությունները խախտած զինապարտ քաղաքացիների վերաբերյալ տեղեկություններ ունենալու դեպքում անհապաղ գրավոր տեղեկատվություն տրամադրել զինկոմիսարիատին:	պարբերաբար
7. Քաղաքացիական պաշտպանության մարմինների գործունեությանը աջակցության վերաբերյալ համայնքի ղեկավարի որոշումների առկայություն:		V		Թերի է պահպանվել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետի պահանջը՝ համաձայն որի համայնքի ղեկավարը աջակցում է քաղաքացիական պաշտպանության մարմինների գործունեությանը:	Առաջարկվում է համաձայն «ՏԻՄ» ՀՀ օրենքի քաղաքացիական պաշտպանության մարմինների գործունեության աջակցության վերաբերյալ կայացնել համապատասխան որոշումներ:	
8. Չինժառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավմանը աջակցության վերաբերյալ համայնքի ղեկավարի որոշումների և փաստերի առկայություն:	V					

Դրույթների անվանումը	Պահպանված է	Թերի է պահպանված	Պահպանված չէ	Հայտնաբերված խախտումները	Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ	Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները
9. Զինձառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման վերաբերյալ համայնքի ղեկավարի որոշումների և փաստերի առկայություն:	V					
10. Բնակչության, հատկապես երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակությանը աջակցության վերաբերյալ համայնքի ղեկավարի որոշումների և փաստերի առկայություն:		V		Թերի է պահպանվել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջը՝ համաձայն որի համայնքի ղեկավարը պաշտպանության կազմակերպման բնագավառում աջակցում է բնակչության, հատկապես երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակությանը:	Առաջարկվում է համաձայն «ՏԻՄ» ՀՀ օրենքի տարածքային զինկոմիսարիատի 2-րդ բաժնի, արցախյան պատերազմի մասնակիցների և համայնքի հանրակրթական դպրոցի տնօրինության հետ համագործակցել, կայացնել համապատասխան որոշումներ և կազմել փաստաթղթեր:	
11. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով զինապարտներին զինվորական կոմիսարիատ կանչվելու մասին ծանուցման վերաբերյալ տվյալների առկայություն:	V					
12. Զինապարտներին զինվորական ծառայության կամ զինկոմիսարիատի ծանուցագրում նշված անհրաժեշտ ժամանակով աշխատանքից ազատելու վերաբերյալ տվյալների առկայություն:	V					

Դրույթների անվանումը	Պահպանված է	Թերի է պահպանված	Պահպանված չէ	Հայտնաբերված խախտումները	Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ	Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները
13. ՏԻՄ-ի կազմում զորահավաքային մարմին ստեղծելու մասին որոշման առկայություն:	V					
14. ՏԻՄ-ի կազմում զորահավաքային մարմնի կանոնադրության առկայություն:	V					
15. Հանրակրթական դպրոցներում, նախնական մասնագիտական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում նախազորակոչային պատրաստության իրականացմանը աջակցության վերաբերյալ որոշումների և փաստերի առկայություն:		V		Թերի է պահպանվել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի պահանջները՝ համաձայն որի համայնքի ղեկավարը հանրակրթական դպրոցի տնօրինության հետ պարտավոր է մասնակցություն ունենալ նախազորակոչային և զորակոչային պատրաստականության իրականացման գործընթացին:	Առաջարկվում է համաձայն «ՏԻՄ» ՀՀ օրենքի տարածքային զինկոմիսարիատի 2-րդ բաժնի, 3-րդ բանակային կորպուսի շտաբի և համայնքի հանրակրթական դպրոցի տնօրինության հետ համագործակցել համապատասխան որոշումների կայացման գործում:	պարբերաբար